Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1072[5]-26.09.2016-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի հունիսի 8-ի ՀՕ-88-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 5-րդ կետում «արհեստակցական միությունների,» բառերից հետո լրացնել «նոտարների,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «կազմակերպությունները, » բառից հետո լրացնել «նոտարները, նոտարական պալատը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի վերնագրում «անձանց» բառից հետո, բովանդակության մեջ 1-ին մասում՝ «կազմակերպությունները,» եւ 2-րդ մասում «մարմինները» բառերից հետո համապատասխանաբար լրացնել «եւ նոտարների,», «նոտարները, նոտարական պալատը», «նոտարները, նոտարական պալատը»բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էլինար	1.«Նոտարիատի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և	1. «աշխատանքային օրը» բառերը փոխարինել «եռօրյա ժամկետում» բառե-	1. Չի ընդունվել: Նախագծով սահմանվել են այն բացառիկ դեպքերը, երբ հաշվի առնելով անձի

Վարդանյան	լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ» (այսուհետ՝ նախագիծ) 6-րդ հոդվածի 3-րդ կետ	րով:	առողջական վիճակը (տեղաշարժի հնարավորությունը սահմանափակող հիվանդություն կամ անօգնական վիճակ), անհրաժեշտ է հնարավորինս շուտ նոտարական գործողությունների կատարում: Այդ իսկ պատճառով Նախագծով սահմանվել են առավել սեղմ ժամկետներ:
	2.Նախագծի 11-րդ հոդված	2. «4.Ուսումնասիրության ենթարկված նոտարի մոտ հաջորդ ծրագրային ուսումնասիրությունը կարող է իրականացվել ոչ շուտ՝ քան դրան հաջորդող երկրորդ տարում:» նախադասությունում «երկրորդ» բառը փոխարինել «երրորդ» բառով:	2. Չի ընդունվել: Ծրագրային ստուգման ժամկետի սահմանաչափը շատ երկար սահմանվելու դեպքում կարող է հանգեցնել որոշակի ինքնավստահության՝ կապված ստուգումներից զերծ մնալու, հետևաբար նաև դրանով պայմանավորված հակաօրինական վարքագիծ դրսևորելու հնարավորություն ընձեռելու հետ: Այսինքն, ծրագրային ստուգման՝ նախագծով սահմանված ժամկետները ունեն որոշակի կանխարգելիչ նշանակություն:
	3.Նախագծի 19-րդ հոդված	3. «5. Եթե նկատողություն կամ խիստ նկատողություն ստանալու կամ նոտարի գործունեությունը կասեցնելու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, իսկ նախազգուշացում ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոտարը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա նա համարվում է կարգապահական տույժ	3. Չի ընդունվել: Նոտարի պարագայում տույժի իրավական հետևանքներից ազատվելու որոշակիորեն երկարատև ժամկետի սահմանումը պայմանավորված է նոտարին ներկայացվող բարձր պահանջներով և «նոտար» ինստիտուտի էությամբ: Այսինքն, նոտարն ի սկզբանե նախատեսված է որպես հիմնական նպատակ արդարադատության իրականացմանը նպաստելուն, որը դրսևորվում է

		չունեցող:» նախադասությունում «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով և «մեկ տարվա» բառերը՝ «վեց ամսվա» բառերով:	օրինականության խստիվ պահպանմամբ նոտարի կողմից կատարված գործողությունների արդյունքում հնարավոր վեճերը բացառելու միջոցով: Այսինքն, նոտարի կողմից օրենքի խախտում թույլ տալն արդեն իսկ հակասում է այդ ինստիտուտի էությանը, որպիսի պարագայում պետք է հնարավորինս բացառվի նշված երևույթը՝ այդ թվում նաև առավել բարձր պատասխանատվության և բացասական իրավական հետևանքների միջոցով: Բացի վերոգրյալից, պետք է նշել, որ նոտարի նկատմամբ խիստ նկատողությունը կիրառվում է բացառիկ դեպքերում, ուստի այս պարագայում արդարացված է սահմանել 2 տարվա ժամկետը, որի լրանալուց հետո նոտարը համարվում է կարգապահական տույժ չունեցող: Ինչ վերաբերում է նախազգուշացման համար 1 տարի սահմանելուն, ապա պետք է նշել, որ դա ընդունված մոտեցում է: Նմանատիպ կարգավորում նախատեսված է նաև դատավորների համար Դատական օրենսգրքում:
	4.Նախագծի 20-րդ հոդվածով խմբագրվող 27-րդ հոդված	4. Կարծում ենք պետք է տարբերակում մտցնել դիտավորությամբ պատճառված վնասի և անզգուշությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության չափի մասով:	4.Նախագծով սահմանվում է, որ նոտարը կրում է քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն, ինչը նշանակում է, որ նոտարի դիտավորությունը, անզգուշությունը և այլ հանգամանքները

			որոշվում են քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
	5. Նախագծի 20-րդ հոդված	5. «, բայց ոչ պակաս քան 6 միլիոնը ՀՀ դրամը» բառերը հանել:	5. Չի ընդունվել: Նախագիծը նպատակ է հետապնդում բարձրացնելու նոտարների պատասխանատվությունը, և առաջարկվող սահմանաչափը ողջամիտ է, քանի որ ներկայումս ՀՀ-ում գործող գրեթե բոլոր նոտարների մեկ տարվա ընթացքում մատուցված ծառայությունների համար գանձված վճարի չափը գերազանցում է 6 միլիոն դրամը:
	6. Նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ կետ	6.«բովանդակությունն ընթերցված լինելու փաստը» բառերը փոխարինել « բովանդակությունը նոտարի կողմից ընթերցված և կողմերի համար պարզաբանված լինելու փաստը» բառերով:	6. Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	7. Նախագծի 37-րդ հոդված	7. «դիմելու օրը» բառերը փոխարինել «դիմելուց հետո եռօրյա ժամկետում» բառերով:	7. Ընդունվել է մասնակի: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ Կառավարություն	8. Նախագծի 35-րդ հոդված	8. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «7) վերապատրաստման բացասական արդյունքները: Որակավորում ունեցող անձը ՀՀ արդարադատության նախարարի	8.Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		սահմանած կարգով վերապատրաստվում է առնվազն երեք տարին մեկ անգամ:»	
	9. Նախագծի 47-րդ հոդված	9. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.« Որակավորում ունեցող թարգմանիչների առաջին վերապատրաստումն իրականացվում է սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:»:	9. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	10. Նախագծի 47-րդ հոդված	10. Նախատեսել դրույթներ, որոնց համապատասխան Նախագծի 28-րդ հոդվածը ուժի մեջ կմտնի 2017 թվականի հունվարի 1-ից:	10. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: